

Տ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՔԵՂԱ ՄԱՅԻԼՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(19 հուլիսի 2004 թ.)

*«Եվ Բանը մարմին եղավ ու բնակվեց մեր
մեջ, և տեսանք Նրա փառքը, և մասն այն փառ-
քի, որ Հայրն է տալիս Միածնին՝ ի շնորհով
ու ճշմարտությանը»:*

(Հովհ. Ա 14)

«Յանուն Հօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելիներ, այսօր մտեցոց է՝ Վարդավառի մտեցոցը: Մեր հայրերն իմաստաբար յուրաքանչյուր տաղավար տոնից հետո հաստատել են ննջեցյալների հիշատակության օր, որը մեր եկեղեցական օրացույցի մեջ գրվում է, արտահայտվում է «մտեցոց» բառով: Բնականաբար, մենք չենք կարող անտարբեր լինել մեր ննջեցյալների նկատմամբ, այն ննջեցյալների նկատմամբ հարկապես, որոնք հավաքով և հույսով իրենց աչքերը փակում են, ննջում են այն հույսով, որ մեկ օր Քրիստոս հարություն պետք է տա իրենց: Ինչո՞ւ պետք է Քրիստոս հարություն տա իրենց, որովհետև Քրիստոս Ինքը՝ ննջեցյալներից անդրանիկը հարություն առավ, հարություն վրեժ թողր նրանց, որոնք ննջած էին մինչև Իր հարությունը, և հարություն պետք է տա բոլոր նրանց, ովքեր ննջելու են ապագայում:

Այսօրվա ճաշու Ավետարանն իր մեջ խաբացնում է այն մեծ ճշմարտությունը, որի համար որ, որին որ մենք խոնարհվում ենք, որին որ մենք երկրպագում ենք, որին որ մենք հավատում ենք: Հովհաննես առաքյալն ասում է. «Բանը մարմին եղավ ու բնակվեց մեր մեջ»: Բանը մարմին եղավ. սա ճշմարտություն էր, որ պետք է կատարվեր: Սակայն ինչպե՞ս բնակվեց մեր մեջ: Ձեզանից շատերը, վարսահաբար, ուշադիր էին երեկվա ճաշու Ավետարանին, երբ ընթերցվեց Մատթեոսի Ավետարանի Պայծառակերպության հատվածը, թե ինչպե՞ս Քրիստոս բարձրացավ Թաբոր լեռ՝ Իր հետ ունենալով առաքյալներից միայն Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին, և նրանց առաջ պայծառակերպվեց, այլակերպվեց: Դա Իր աստվածության հայտնություններից մեկն էր: Մեր Տերը, որ մարմին էր եղել, եկավ և բնակվեց Իր առաքյալների մեջ, սակայն առաքյալների մեջ բնակվելով՝ չընդհատվեց, չըվերջացավ առաքելությունն աստվածային: Մեր Տերը շարունակ իջնում և բնակվում է մեր մեջ, իջնում և բնակվում է հացի և գինու տեսքով, որովհետև մենք, որպես մարդկային տկար էակներ, չենք կարող մեր մեջ ընդունել մարդու միս և արյուն: Հետևաբար, Աստված այնքան սիրեց մեզ, որ արժանացրեց այդ մեծ ողորմությանը:

Մեզանից շատերն այսօր փափագում են հրաշքներ տեսնել, փափագում են տեսնել և նոր հավաքալ, բայց միշտ պետք է մեր ականջներին հնչի Տիրոջ խոսքը. «Դուք տեսաք և հավատացիք,- ասում էր առաքյալներին,- երանի նրանց, որոնք չեն տեսնի, սակայն կհա-

վարան» (Հմմտ Նովի. Ի 29): Բանը մարմին եղավ, այսինքն՝ Աստուծո միածին Որդին՝ Հիսուս Քրիստոս, մարմին եղավ, առավ մարդկային մարմին, միտք և հոգի, սակայն նաև բնակվեց մեր մեջ: Ինչքան որ մեծ է խորհուրդը Տիրոջ մարմին լինելու, այնքան ավելի մեծ է և շար ավելի մեծ է խորհուրդը մեր մեջ բնակվելու:

Քրիստոս շոշափելի ներկայությամբ միշտ առաքյալների հետ էր, առաքյալների մեջ էր, բայց նաև շոշափելի ներկայությամբ մեր մեջ է, երբ որ մենք ճշմարտապես, արժանավորապես մտրեմուս ենք հաղորդվելու Իր սուրբ մարմնին և սուրբ արյանը: Բանը մարմին եղավ մեզանից երկու հազար և ավելի տարի առաջ, սակայն բնակվում է մեր մեջ երկու հազար և ավելի տարիներ և պետք է բնակվի մեր մեջ հավիտենապես, մշտնջենավորապես, եթե մենք ցանկանում ենք, փափագում ենք մեր ազատ կամքով ընդունելու մարմնացած Բանին: Օրվա յուրաքանչյուր խորհուրդ և Ավետարանական ընթերցված ունի իր խորհուրդը և իմաստը:

Ամեն մի խոսք կարողում ենք, փորձում ենք հավատալ, խնդրում ենք Տիրոջից, որ այդ հավատքը մեզ շնորհի, որպեսզի չերկմրենք աստվածային ճշմարտությունների առաջ, թերի կամ տկար չհամարենք Ավետարանի խոսքերը, ինչպես որ կարող էին համարել կամ այսօր էլ համարում են շատերը: Աստված հայտնվում է նրանց, Աստված բնակվում է նրանց մեջ, ովքեր որ խոնարհ սրտով, ճշմարիտ և ուղղափառ աստվածաշարժությամբ հար և հանապաղ դիմում են մարմնացած Քրիստոսին:

Մարմնացած Քրիստոսի խորհուրդը շար մեծ է: Մեր հայրերը փորձել են մարդկային ամենապարզ բառերով մեզ հասկանալի դարձնել, թե ինչ է նշանակում՝ «Բանը մարմին եղավ ու բնակվեց մեր մեջ» (Նովի. Ա 14): Չմոռանանք, որ այդ Բանը միշտ մեր մեջ է, միայն թե մենք ենք անտարբեր Նրա նկատմամբ: Այն նաև մեր ննջեցյալների հետ է: Այսօր հավաքվել ենք բոլորս այստեղ մեռելոցի Ս. Պարարագին, և այսօրվա խորհուրդը հարուկ իմաստ և նշանակություն ունի, որովհետև ինչպես որ մենք կարիք ունենք սրբերի բարեխոսության՝ ի գլուխ ունենալով Աստվածամայրը, այնպես էլ մեր ննջեցյալները կարիք ունեն մեր բարեխոսության. չէ՛ որ մենք հոգեհանգստյան աղոթքի մեջ խնդրում ենք՝ ասելով. «Տեր, ներիք, քավիր նրանց մեղքերը և աջակողմյան սրբերի դասերի հետ բնակեցրու նրանց»:

Ներկաբար, հոգեհանգստյանը ննջեցյալների համար աղոթելիս մենք, իբրև զինվորյալ Եկեղեցու ներկայացուցիչներ, բարեխոսներ ենք յուրաքանչյուրս մեր ննջեցյալների համար: Աստված թող բոլոր մեր ննջեցյալների հոգիներն իր լուսեղեն, անմար խորանների մեջ բնակեցնի, այն խորանների, որոնց լույսը երբեք չի նվազում: Այդ խորանները միշտ լուսավոր են: Աղոթենք առ Աստված, որպեսզի Նա Իր ողորմությամբ մեր ննջեցյալներին հանգցեցնի Իր սուրբ առաքյալների և սրբերի կողքին, որովհետև արդեն իսկ այդ է մեր խնդրանքը:

«Բանը մարմին եղավ ու բնակվեց մեր մեջ»: Ամբողջ մի իմաստություն, ամբողջ մի ճշմարտություն: Թերևս միայն այս մեկ նախադասության համար բազմաթիվ մեկնություններ են գրվել և շարունակվում են գրվել կամ վերաշարադրվել: Այսօր ինձ համար շար մեծ ուրախություն և ցնծություն է հոգևոր՝ Ս. Պարարագ մատուցելու այս աստվածակառույց փառարից ներս, որտեղ որ միշտ կա աստվածային օրհնությունը, Ամենասուրբ Երրորդության ներկայությունը և մեր սուրբ Հայրապետների աղոթքները: Ինձ համար մեծ ուրախություն է գտնվել միաբանակից իմ եղբայրների կողքին, ճեմարանական մեր սաների՝ կողքին, ինչպես նաև ձեր կողքին, և ձեզ հետ միասին աղոթելու: Քրիստոս ասում է. «Ուր որ երկու

կամ երեք հոգի հավաքված են հանուն իմ, ես այնքան եմ նրանց մեջ»: Եկեղեցին արդեն իսկ մեր հավաքն է, հավաքացյալների հավաքն է, ժողովն է: Ներկաբար, մեր միասնական աղոթքը կարող է ավելի զորավոր լինել, եթե ճշմարտապես մեր խորհուրդները և մեր աղոթքներն ուղղված են առ Աստված:

Աղոթում եմ Աստծուն բոլորիդ համար և խնդրում եմ ձեր աղոթքը նաև ինձ համար: Ինչքան որ աղոթեք, խնդրեք Աստծուն բոլոր հոգևոր սպասավորների համար և հարկապես նրանց համար, ովքեր որ խնդրում են ձեզ աղոթել: Այդ աղոթքն է, որ մեզ կապում է, մեզ բուրիս միացնում է, այդ աղոթքն է, որ մեր ննջեցյալներին և մեզ դարձնում է մեկ: Թող Աստված օրհնի բոլորիդ, գորացնի ձեր հավաքքը, որպեսզի ճշմարիտ ապաշխարության և խոստովանության մեջ լինեք միշտ, և կարողանանք մեղքից հեռու մնալով՝ մոտենալ և մերձենալ ճշմարիտ Աստծուն, մոտենալ և մերձենալ մարմնացած և մեր մեջ բնակվող Բանին:

«Շնորհք, սէր Տեսնե մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ ևս ընդ ամենեսեանս. ամեն»: